Հայտարարագրման համակարգի և հանրային էթիկայի կանոնակարգումներն Արգենտինայում

Արգենտինայում **ֆինանսական հայտարարագրման համակարգը** գործում է 1953 թվականից: Այն ի սկզբանե չի ունեցել միայն հակակոռուպցիոն ուղղվածություն և առավելապես կենտրոնացած է եղել հարկային պարտավորությունների բացահայտման հարցերի վրա:

Արգենտինայում ֆինանսական հայտարարագրման համակարգը գործում է միայն գործադիր իշխանության ոլորտի պաշտոնատար անձանց համար:

Համակարգի նպատակն ապօրինի հարստացման, շահերի բախման և պաշտոնի անհամատեղելիության դեպքերի բացահայտումն է:

Արգենտինայի Հակակոռուպցիոն գրասենյակն իրականացնում է՝

- քաղաքացիներից դիմում-բողոքների ընդունում,
- նախնական «հետաքննություն»,
- հայտարարագրերի ռեեստրի վարում և հայտարարագիր չներկայացրած պաշտոնյաների բացահայտում,
- հայտարարագրերի հրապարակում,
- ապօրինի հարստացման դեպքերի բացահայտում,
- շահերի բախման դեպքերի բացահայտում,
- անհամատեղելիության՝ սահմանված արգելքների խախտումների բացահայտում,
- ընտրանքային 2500 բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերի նկատմամբ մշտական հսկողություն:

Արգենտինայի Հակակոռուպցիոն գրասենյակը նաև՝

- բացահայտված դեպքերի հիման վրա դիմում է դատարան,
- դատարանում հանդես է գալիս որպես մեղադրող,

- խախտում թույլ տված պաշտոնյաների նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ առաջարկություններ է ներկայացում,
- հայտարարագիր չներկայացրած պաշտոնյաների նկատմամբ կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Հայտարարագիր ներկայացնող անձանց շրջանակն ընդգրկում է գործադիր իշխանության ոլորտի 42.500 պաշտոնյաների, այդ թվում՝ երկրի նախագահին, վարչապետին, նախարարներին, նախարարների տեղակալներին, նախարարների խորհրդականներին, օգնականներին, պետական քարտուղարներին, դիրեկտորիատների տնօրեններին, պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին, ռեկտորներին, դեկաններին, բանկերի տնօրեններին, պետական առևտրային կազմակերպությունների տնօրեններին, հանրային պաշտոնյաներին, որոնք օժտված են լիցենզավորման, վերահսկողական գործառույթներով, այդ թվում՝ հարկային, մաքսային ծառայողներին և այլ սուբյեկտների:

Յուրաքանչյուր հանրային մարմնում օրենքով առանձնացված են հայտարարագրման հարցերով պատասխանատուներ՝ ի դեմս տվյալ մարմնի անձնակազմի կառավարման ստորաբաժանման, որոնք կազմում են հանրային պաշտոնյաների ցանկերը և ներկայացնում Հակակոռուպցիոն գրասենյակ, ինչպես նաև պահպանում են ոչ բարձրաստիճան պաշտոնատար անձանց նույնականացված հայտարարագրերի թղթային տարբերակները: Այդ պատասխանատուները միաժամանակ իրականացնում են հայտարարագրերի լրացման ուղեցույցի պահանջներին համապատասխանության ստուգում, ծանուցում հայտարարագրերի ներկայացման ժամկետների մասին: Օրենքով նախատեսված են նման պատասխանատուներ 200-ից ավելի մարմիններում:

Հայտարարագրի բովանդակությունը, կառուցվածքը և ներկայացման ժամկետները

Հայտարարագրման ենթակա են գույքը (անշարժ, շարժական), արժեթղթերը, խնայողությունները, կանխիկ դրամական միջոցները, վարկերը, եկամուտները: Առանձին հայտարարագրվում են շահերը՝ զբաղեցրած այլ պաշտոնները, բաժնեմասերը, ներդրումները, վարկերը և փոխառությունները, աշխատանքային անցյալի վերաբերյալ տվյալները: Դրանք հայտարարագրում է պաշտոնատար անձը՝ իր ընտանիքի համար (ամուսին, անչափահաս զավակներ): Հայտարարագրերը ներկայացվում են պաշտոնի ստանձնման և դադարեցման, ինչպես նաև տարեկան կտրվածքով՝ մեկ միասնական ձևաթղթով:

Հայտարարագրում գույքի և ակտիվների մեծությունը ներկայացվում է արգենտինական պեսոյով: Արտարժույթով կատարված գործարքները (խնայողությունները, դրամական միջոցները) վերահաշվարկվում են պեսոյի՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գործող պաշտոնական փոխարժեքով և արձանագրվում:

Հայտարարագիրը ներառում է նաև տվյալներ վարկային քարտերի վերաբերյալ: Արժեթղթերը հայտարարագրվում են բորսայական արժեքով: «Բաժնետոմսերը» բաժնում հայտարարագրվում են նաև տվյալներ առևտրային կազմակերպության՝ պետական գնումների գործընթացին մասնակցության վերաբերյալ:

Պաշտոնը ստանձնելու կամ դադարեցնելու հայտարարագրերը ներկայացվում են այդ օրվան հաջորդող մեկամսյա ժամկետում, իսկ տարեկան հայտարարագրերը՝ մինչև տվյալ հարկային տարվա ապրիլի 15-ը:

Հայտարարագրի ներկայացման եղանակը

Հայտարարագիրը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով՝ հարկային մարմնին ներկայացման ենթակա եկամուտների հայտարարագրի հետ միաժամանակ: Ի տարբերություն քաղաքացիների, պաշտոնատար անձինք

ներկայացնում են նաև շահերի հայտարարագիր: Շահերի հայտարարագիրը, ինչպես նաև գույքի և եկամուտների հայտարարագրի տվյալները հարկային ծառայությունը փոխանցում է Հակակոռուպցիոն գրասենյակ: Դրա հետ մեկտեղ, հայտարարատուն փակ ծրարով ներկայացնում է նաև տվյալներ բանկային հաշիվների, վարկային քարտերի վերաբերյալ: Փակ ծրարը բացվում է դատավորի կողմից, եթե առկա են կասկածներ և հարուցված է վարույթ, կամ Հակակոռուպցիոն գրասենյակի կողմից՝ համաձայնեցնելով արդարադատության նախարարի հետ:

Արգենտինայում պաշտոնատար անձի կողմից գույքի հայտարարագիրը չարամտորեն չներկայացնելը պատժվում է ազատազրկմամբ՝ 15 օրից մինչև 2 տարի ժամկետով և ցմահ որակազրկմամբ: Հանցագործությունը համարվում է կատարված, երբ համապատասխան պարտավորությունը կատարելու պահանջի վերաբերյալ պատշաճ ծանուցում ստանալուց հետո անձը օրենքով սահմանված ժամկետում պարտավորությունը չի կատարում: Վերոնշյալ պատիժները նշանակվում են նաև այն անձանց նկատմամբ, ովքեր չարամտորեն խեղաթյուրում են կամ չեն ներկայացնում ամբողջական տվյալներ:

Շահերի բախման սահմանափակումների չպահպանման համար սահմանված են վարչական պատասխանատվության միջոցներ: Այսպես, սահմանված ժամկետում հայտարարագիր չներկայացրած հանրային պաշտոնյաները նախազգուշացվում են և նրանց տրվում է 15-օրյա ժամկետ հայտարարագիր ներկայացնելու համար: Հայտարարագրի չներկայացման ժամկետի համար պաշտոնատար անձի ամսեկան աշխատավարձից պահվում է դրա 20 %-ը, որը վերադարձվում է հայտարարագիրը ներկայացնելուց հետո:

Ապօրինի հարստացումն Ագենտինայում քրեորեն պատժելի է: Սույն արարքի համար պատասխանատվություն է նախատեսված, եթե այն կատարվել է նաև պաշտոնաթողությունից հետո՝ մինչև 2 տարվա ընթացքում:

Պատասխանատվության միջոցներ են կիրառվում նաև պետական մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանման էթիկայի հարցերով պատասխանատուների նկատմամբ՝ ընդհուպ մինչև պաշտոնից ազատում:

Էլեկտրոնային համակարգի միջոցով հայտարարագիրը լրացնելու համար յուրաքանչյուր հայտարարատու մուտք է գործում համակարգ իր անձի նույնականացման համարանիշով և ստեղծում գաղտնաբառ:

Եթե պաշտոնատար անձինք ունեն արդեն լրացված եկամուտների հայտարարագիր, ապա համակարգը թույլատրում է բեռնել տվյալներ այդ հայտարարագրից:

Հայտարարագրի հանձնման ժամանակ համակարգը հիշեցնում է ոչ հավաստի տվյալներ տրամադրելու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին և հայտարարատուն համապատասխան նշումով հաստատում է այդ հիշեցմանը ծանոթանալու փաստը:

Հայտարարագրի հանձնման արդյունքում հայտարարատուն ստանում է հանձնման մասին սերտիֆիկատ կամ տեղեկանք:

Հարկային ծառայության եկամուտների էլեկտրոնային համակարգը հասանելիություն ունի երկրի բոլոր պետական մարմինների (անշարժ գույքի, ավտոմեքենաների, կենտրոնական բանկի, հարկային եկամուտների, սոցիալական ապահովության համակարգի ռեեստրներ, դեպոզիտարիա, «սև ցուցակներ» և այլն) և բանկերի տվյալների էլեկտրոնային բազաներին: Պահանջվող տվյալները օրենքով սահմանված կարգով փոխանցվում են Հակակոռուպցիոն գրասենյակ՝ հետագա վերլուծության համար:

Հարկային ծառայության էլեկտրոնային համակարգի միջոցով հսկողությունն իրականացվում է ռիսկերի հիման վրա կառուցված մեթոդաբանությամբ: Համակարգչային ծրագիրը հնարավորություն է տալիս բացահայտելու տարվա սկզբին և տարեվերջին հայտարարագրված գույքային դրության աճի հիմնավորվածությունը եկամուտներով: Եթե գույքի աճի տարբերությունը

գերազանցում է եկամուտները 30 տոկոսով, ապա սկսվում է հետաքննություն, որի դեպքում համակարգի միջոցով հնարավոր է հայտարարագրի հետ համադրել քաղաքացու բոլոր գործարքները այդ ժամանակահատվածում, այդ թվում՝ ուսումնասիրելով ազգակցական կապերը, հասցեները, գույքի տեսակները, գործարքի հայտարարագրված գինը, բանկային քարտերով վճարումները և այլն:

Հայտարարագրերի հրապարակում

Հարկային մարմնից պաշտոնատար անձանց հայտարարագրերի տվյալները վերբեռնվում են Արգենտինայի Հակակոռուպցիոն մարմնի էլեկտրոնային բազա, որտեղից դրանք PDF ձևաչափով՝ հայտարարագրի ձևաթղթին համապատասխան հրապարակվում են:

Հայտարարագրերը հակակոռուպցիոն մարմնի կայքում տեսնելու համար յուրաքանչյուր ոք կարող է գրանցվել համակարգում՝ և հնարավորություն ստանալով տեսնելու միայն մեկ պաշտոնյայի հայտարարագիր:

Հանրային էթիկայի կանոնակարգումները

Հանրային պաշտոնյաները չեն կարող մասնակցությունն ունենալ առևտրային կազմակերպություններում: Այս սահմանափակումը կիրառելի է միայն նախարարների տեղակալներից բարձր պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ: Բոլոր դեպքերում, ունենալով մասնակցություն առևտրային կազմակերպություններում, պաշտոնյաները իրենց պաշտոնեական գործունեությամբ չեն կարող անմիջական վերահսկողություն իրականացնել կամ ազդեցություն ունենալ այդ կազմակերպությունների նկատմամբ: Կազմակերպությունների նկատմամբ ունեցած ազդեցության առկայությունը գնահատում է հակակոռուպցիոն մարմինը: Հանրային պաշտոնյաները չեն կարող անձամբ կամ երրորդ անձի միջոցով ծառայությունների մատուցել այն պետական մարմնին կամ դրա կազմակերպությանը, որտեղ պաշտոնավարում է պաշտոնյան: Երրորդ անձանց շրջանակը սահմանում է հակակոռուպցիոն մարմինը: Արգենտինայում սահմանված են նաև այլ աշխատանք կամ այլ պաշտոններ

համատեղելու սահմանափակումներ: Հայտարարագրի համապատասխան բաժինը այդ մասին տվյալներ է բովանդակում:

Գործունեության սահմանափակումներին առնչվող կարգավորումների խախտման դեպքերով վարույթ է հարուցվում է, եթե այդ կապակցությամբ առկա է հրապարակում լրատվամիջոցներում կամ ստացվել է ահազանգ: Անանուն նամակներին նույնպես արձագանքում են, եթե նամակում առկա են կոնկրետ տեղեկություններ և տվյալներ: Ահազանգերի մոտ 70 %-ը անանուն են:

Շահերի բախման առկայության վերաբերյալ որոշումը կայացնում է հակակոռուպցիոն մարմինը: Եթե շահերի բախման փաստը հաստատվում է, ապա համապատասխան գործարքը չեղյալ է համարվում և պաշտոնյայի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու նպատակով հակակոռուպցիոն մարմինն առաջարկություն է ներկայացնում համապատասխան մարմնի ղեկավարին: Քաղաքական պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ վարույթ չի հարուցվում, նրանք հեռանում են պաշտոնից:

Արգենտինայի հակակոռուպցիոն գրասենյակում գործում է Հետաքննողների վարչությունը, որը կատարում է վարչական հետաքննություն ստացված բողոքների, հրապարակումների, թեժ գծերի, այլ միջոցներով ստացված տեղեկատվության, ինչպես նաև հայտարարագրերի վերլուծությամբ բացահայտված ռիսկերի, շահերի բախման և այլ անհամապատասխանությունների հիման վրա: Վարչությունը քննում է շահերի բախման և ապօրինի հարստացման դեպքերը:

Շահերի բախման և անհամապատասխանությունների բացահայտման ժամանակ երեք տեսակի ցուցանիշներով գնահատվում է նաև պաշտոնյայի արարքի ազդեցությունը: Առաջինը տնտեսական ցուցանիշն է, որի դեպքում գնահատվում է հանրային պաշտոնյայի գործողության ազդեցությունը տնտեսության վրա (օրինակ՝ 1 մլն պեսո գումարը գերազանցելու դեպքում): Երկրորդ դեպքում գնահատվում է արարքի ազդեցությունը սոցիալական առանձին խմբերի և հասարակության առանձին շերտերի վրա կոնկրետ ոլորտում (օրինակ՝

առողջապահության ոլորտում): Երրորդ՝ ինստիտուցիոնալ գնահատականի դեպքում, որոշվում է, թե պաշտոնյայի արարքը ինչպիսի ազդեցություն է թողնում հանրային մարմինների հեղինակության վրա:

Ապօրինի հարստացման և շահերի բախման սահմանափակումների խախտումների բացահայտումը հակակոռուպցիոն մարմնի լիազորությունն է: